Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-003[1]-24.05.2017-ԳԿ-011/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 19-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի 9.6.2., 9.6.2.1., 9.6.2.2., 9.6.2.3., 9.6.2.4. ենթակետերը շարադրել հետեւյալ նոր խմբագրությամբ.

բ) 9.6.2. ռադիոհաղորդումների հեռարձակման համար՝

9.6.2.1.	Երեւան քաղաքում եւ միաժամանակ մեկ կամ մի քանի մարզերում հեռարձակման համար՝	տարեկան բազային տուրքի 500-ապատիկի չափով
9.6.2.2.	Երեւան քաղաքի տարածքում հեռարձակման համար՝ տարեկան	բազային տուրքի 200-ապատիկի չափով
9.6.2.3.	Երեւան քաղաքը չներառող՝ մեկից ավելի մարզերի տարածքում հեռարձակման համար՝ տարեկան	բազային տուրքի 25-ապատիկի չափով
9.6.2.4.	մեկ մարզի տարածքում հեռարձակման համար՝ տարեկան	բազային տուրքի 10-ապատիկի չափով

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	1	2	3	4	
1.	Ելք խմբակցության ղեկավար Նիկոլ Փաշինյան	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդված	Առաջարկվում է 9.6.2.3. ենթակետի «75-ապատիկի» արտահայտությունը փոխարինել «25-ապատիկի» արտահայտությամբ, նոր խմբագրությամբ շարադրված 9.6.2.4. ենթակետի «50-ապատիկի» արտահայտությունը փոխարինել «10-ապատիկի» արտահայտությամբ	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է	